

2019թ. հոկտեմբերի 1-դեկտեմբերի 31

Լրատվամիջոցներում և սոցցանցերում տարածված քարոզչական թեզերն ու մանիպուլյացիաները

Եռամսյակային հաշվետվություն

2019 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում շրջանառվող մանիպուլյացիաների և քարոզչական թեզերի «ամյունի բաժինը» կազմում էր Սահմանադրական դատարանի շուրջ ծավալվող թեման: Հաշվետու ժամանակահատվածում ակտիվ էր նաև Արցախյան հարցում իշխանությունների «դավադիր քայլերի» թեզը, առաջ եկավ նաև համեմատաբար նոր թեզ՝ «Հայաստանը շարժվում է դեպի ավտորիտարիզմ»: Ընդ որում, գրեթե բոլոր քարոզչական թեզերի միջով կարմիր թելի պես անցնում էր «ամենակարող Սորոսի» մասին թեզը, թե Հայաստանում օրակարգ է թելադրում Սորոս Զորջը:

Ամեն գնով հեռացնել Հրայր Թովմասյանին

2019 թ. աշնանը մամուլում ակտիվ սկսեց շրջանառվել այն թեզը, թե իշխանությունները Ռոբերտ Զոչարյանի գործով որոշումից¹ հետո ինդիո են դրել ազատվել «նախկին իշխանությունների վերջին բաստիոնից»՝ Սահմանադրական դատարանից, և ամեն ինչի պատրաստ են գնալ՝ ՍԴ նախագահ Հրայր Թովմասյանից ազատվելու համար:

Հրայր Թովմասյանի նկատմամբ «շարունակական ճնշումների» թեզի լայն տարածման համար առիթ հանդիսացան նրա սանիկների՝ ԱԺ աշխատակազմի Վարչատնտեսական վարչության մատակարարման բաժնի պետ [Զոչար Խաչատրյանի](#), իսկ մի քանի օր հետո՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նախկին պետ [Նորայր Փանոսյանի](#) ձերբակալությունները, որոնք արագ որակվեցին որպես քաղաքական ենթատեքստ ունեցող: Մամուլում պնդումներ [արվեցին](#), թե իշխանությունները, Թովմասյանի դեմ քրեական գործ հարուցելու հիմքեր չգտնելով, անցել են նրա ազգականներին հետապնդելուն: 7օր.am-ի «Պետական ահաբեկչությունն ու քավոր-սանիկային երկակի ստանդարտները» վերտառությամբ [հոդվածում](#), մասնավորապես, ամփոփված էր այն թեզը, թե Հրայր Թովմասյանից ազատվելու համար դիմում են «ամենակեղտոտ մեթոդներին», իսկ «թավշյա առաջնորդի» հովանավորությամբ կարվող գործը ոչ այլ ինչ է, քան «պետական ահաբեկչություն»:

Ինքը՝ Հրայր Թովմասյանը, 168.am-ի տաղավարում իրեն [համեմատում էր](#) սահմանին կանգնած զինվորի, իսկ ՍԴ-ն՝ խրամատի հետ և պնդում՝ իրեն վստահված խրամատից ետքայլը դավաճանություն է²:

Հրայր Թովմասյանի շուրջ իրավիճակն էլ ավելի սրվեց, երբ հոկտեմբերի սկզբին մի խումբ երիտասարդներ [ակցիա](#) իրականացրին Թովմասյանի քրոջը պատկանող «Հայելի» մամուլի ակումբի դեմ, հետո էլ [հայտնի դարձավ](#), որ ԱԼԾ-ում հարցաքննվել են Հրայր Թովմասյանի հայրը և դուստրերը: Այս իրադարձությունների ֆոնին 168.am կայքում հրապարակվեց «Անձնական տեռոր» խորագրով [հոդված](#) այն մասին, թե ինչպես են իշխանությունները

¹. Սեպտեմբերի 4-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական [էր ճանաչել](#) Զոչարյանի վիճարկած երկու հոդվածներից մեկը:

². Հրայր Թովմասյանի այս հարցազրույցը, ի դեպ, հետագայում հաջողությամբ օգտագործեց իշխանական թևը՝ ցույց տալու, որ ՍԴ-նախագահը քաղաքական հայտարարություններ է անում, հետևաբար չի կարող չեզոք լինել:

«անճարությունից» բոլոր ռեսուրսներով հետապնդում Թովմասյանի ընտանիքի անդամներին՝ հորը, դուստրերին, քրոջը:

«Այն կարող ենք փաստել, որ իշխանությունը անարխիայի ճանապարհով է գնում և տեռոր է սկսել Թովմասյանների ընտանիքի դեմ: Այլևս պետք է արձանագրել, որ Հայաստանում փակված է ինդիքներն իրավական ուղով լուծելու ճանապարհը, որ հեղափոխական իշխանությունը խախտել է բոլոր սահմանափակումները, գերազանցել անգամ նախորդներին, որոնց ժամանակ կար չգրված օրենք՝ անկախ քաղաքական շահերից ու ամբիցիաներից, ընտանիք մտնել չի կարելի», - իր հերթին, [գրել էր](#) Հրայր Թովմասյանի քրոջը պատկանող hayeli.am կայքը:

Հրայր Թովմասյանի նկատմամբ «քաղաքական ճնշումների» թեզը լրատվամիջոցներում և ընդդիմադիր ճակատում հաջողությամբ կարողացան կապել նաև Ստամբուլյան կոնվենցիայի հետ: Այն բանից հետո, երբ [հայտնի դարձավ](#), որ Վենետիկի հանձնաժողովը դրական կարծիք է հայտնել Ստամբուլյան կոնվենցիայի սահմանադրական ազդեցության վերաբերյալ, մամուլում [եզրակացրեցին](#). իշխանությունները գործարքի են գնացել Արևմուտքի հետ՝ «Ստամբուլյան կոնվենցիայի վավերացում Հրայր Թովմասյանի դիմաց» բանաձևով:

Բռնաճնշումներ, «37 թիվ»

Հրայր Թովմասյանի և ՄԴ-ի դեմ ճնշումների թեմայի շրջանակում ընդդիմադիր լրատվամիջոցներում և սոցցանցերում ամրապնդվեց այն թեզը, թե Հայաստանը հեղափոխությունից հետո ոչ թե դեպի ժողովրդավարություն է գնում, այլ արագ քայլերով հետ է գնում դեպի 37 թվի բռնաճնշումներ, դեպի միջևադար, վերածվում է ավտորիտար երկրի, որտեղ անդադար բռնաճնշումների են ենթարկում ընդդիմադիր հայացքների համար:

Բռնաճնշումների թեզն էլ ավելի ամրապնդվեց, երբ պաշտոնեական կեղծիք կատարելու մեղադրանքով [ձեռքակալվեց](#), ապա [կայանավորվեց](#) ԱԺ աշխատակազմի նախկին տեղակալ, «վտանգավոր չարագործ» Արսեն Բաբայանը: Մամուլը արագ հիշեցրեց, որ «Բաբայանը Հրայր Թովմասյանի մտերիմ ընկերն է և բարձրաձայն հայտարարել է դրա մասին»: Արսեն Բաբայանի թեմային անդրադարձել է «Հրապարակ» թերթը՝ «Արագ քայլերով՝ դեպի 37 թիվ» [հոդվածում](#). «Մինչ մենք խոսում-ահագանգում ենք քաղաքական հետապնդումների և քաղաքական հակառակորդներին քրեական մեթոդներով ճնշելու անթույլատրելիության մասին, իշխանությունն անցնում է բացահայտ տեռորի: Եվ Հրայր Թովմասյանի «գործի» շրջանակներում ոչ միայն նրա ընտանիքի անդամների, այլև ընկերների ու նախկին գործընկերների դեմ են գործեր հարուցվում»:

«Քաղաքական բռնաճնշումներ և 37 թիվ» քարոզչական թեզի սաղմերը դրվել էին դեռ սեպտեմբերի վերջին, երբ Քոչարյանի գործով դատավոր Աննա Դանիբեկյանին հետապնդելու համար [կայանավորվեցին](#) Քոչարյանի աջակիցներ Նարեկ Մուրաֆյանը և Սարգիս Օհանջանյանը (որոնք կարճ ժամանակ անց ազատ արձակվեցին): Որոշ շրջանակներում նրանց համարեցին «դասական առումով առաջին քաղբանտարկյալները», որոշներն էլ ուղղեցին՝ Քոչարյանը ևս քաղբանտարկյալ է:

Այս ֆոնին հատկապես ակտիվացել էր «5-րդ ալիքը», որի հոկտեմբերի 8-ի «Հայլուրի» գլխավոր թողարկման ընթացքում հրապարակախոս Լիա Իվանյանը [այնդում էր](#). «Երկրում օրենքը գործում է ընտրովի, և Հայաստանը վերածվում է բռնատիրության» (4:25 րոպե):

Բռնաճնշումների թեզին նոր խթան հաղորդվեց, երբ «քաղբանտարկյալների» թիվը [համայնեց](#) «5-րդ ալիքի» սեփականատեր, Ռոբերտ Քոչարյանի ընկեր Արմեն Թավադյանը: Ընդդիմադիր

շրջանակներում և մամուլում եզրակացրեցին, որ Հայաստանը վերածվել է դասական բռնատիրության, որտեղ «քաղաքական հայացքների պատճառով հետապնդումները» զուգակցվում են «մամուլի նկատմամբ ճնշումներով»: Հայաստանում տիրող բռնատիրության մթնոլորտը տարեվերջին ամփոփեց «Հրապարակ» թերթը՝ [«2019-ի «լավագույն» ճնշումները ԶԼՄ-ների նկատմամբ»](#) և [««Բռնոցի-պախկվոցի» չար կոր տարուց առաջ»](#) հոդվածներով: «Այս երկրում ոչինչ չի փոխվում: «Ա1+»-ի փոխարեն այսօր «5-րդ ալիք»-ն է», - գրել էր թերթը:

Արցախյան դավադրություն

Նորանկախ Հայաստանի գրեթե բոլոր փուլերում հայ ժողովրդի համար թերևս ամենագազայուն՝ Արցախյան բանակցությունների և հողեր հանձնելու հարցը մշտապես շահարկվել է քաղաքական նպատակներով: Հաշվետու ժամանակահատվածում «Արցախի հարցում դավադրությունների» թեզը կոր թափ ստացավ՝ պայմանավորված մի քանի իրադարձություններով:

Այսպես, հոկտեմբերի 15-ին Վիտալի Բալասանյանը մոտ երեք ժամանոց [ասուլիս հրավիրեց](#) Ստեփանակերտում՝ ըստ էության կրկնելով իր նախորդ [հարցազրույցի](#) հիմնական թեզերը և հատկապես շեշտադրելով, որ Փաշինյանը «վերելակային բանակցությունների» մեջ է Ալիևի հետ: Սա հիմք տվեց որոշ լրատվամիջոցների և փորձագետների [առաջ քաշել](#) այն վարկածը, որ Փաշինյանը ՊՊԾ ղեկավարին՝ Գրիգորի Հայրապետովին պաշտոնից ազատել է, քանի որ վերջինս տեղյակ է եղել Ալիևի հետ իր վերելակային շփումներից և տեղեկություն է փոխանցել Բալասանյանին:

Նույն օրը Երևանում Բակո Սահակյանի և Նիկոլ Փաշինյանի հանդիպումից հետո, առցանց տիրույթը հեղեղվեց քննարկումներով, թե հանդիպման սրահում Արցախի դրոշմ բացակայում է³, Փաշինյանն էլ Արցախի նախագահին դիմում է «պարոն մարզպետ»⁴: Չնայած այս տեղեկությունները արագ հերքվեցին, բայց լրատվամիջոցներում և սոցցանցերում չէին դադարում մանիպուլյատիվ պնդումները, թե Փաշինյանի կողմից սա աննախադեպ դավադրություն է: Կատարվածին առավել կոշտ [արձագանքեց](#) Hayeli.am-ը՝ «Մի դիմելաձևի պատմություն. «Սահակյան», թե՛ մարզպետ» վերտառությամբ հոդվածում. «Փաշինյանի իշխանության օրոք հակադարաբաղցիական դիվերսիոն քարոզը հասել է աններելի չափերի: Նույնիսկ իր «հոգևոր» հոր՝ քիրվայականության ռահվիրա Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության ժամանակ այսպես չի եղել»:

Ավելի ուշ «պարզվեց», որ այս իշխանություններին «հողերը հանձնել խանգարում է» Սերժ Սարգսյանը: Ըստ ընդդիմադիրների՝ հենց դա էր պատճառը, որ ՀԶԾ-ն մեղադրանք [առաջադրեց](#) նախկին նախագահին՝ կես միլիարդ դրամի դիվալտելիքի չարաշահման քրգործով: Նախկին իշխանությանը հարող շրջանակներում սա [որակեցին](#) որպես «քաղաքական հետապնդում»՝ այն կապելով արցախյան հիմնախնդրի հետ, մամուլում էլ արձանագրեցին. «Տևական ժամանակ է՝ գնահատականներ են հնչում, որ Ս. Սարգսյանի դեմ գործ հարուցելը լինելու է իշխանությունների վերջին ու կարևորագույն խաղաքարտը, ու խիստ ուշագրավ է, որ դա տեղի ունեցավ հենց Արցախի հարցի վերաբերյալ Ադրբեջանի

³. Նիկոլ Փաշինյանը միակը չէ. Արցախի դրոշմ «մոռացել են» նաև. Զեյնալյանն ու Սարգսյանը <https://fip.am/8728>

⁴. Վլադիմիր Կարապետյան. «Վարչապետն ասել է՝ հարգելի պարոն նախագահ, հարգելի պարոն Սահակյան»

<https://www.civilnet.am/news/2019/10/16/%D5%80%D5%A5%D6%80%D6%84%D5%B8%D6%82%D5%B4%D5%9D-%C2%AB%D5%8E%D5%A1%D6%80%D5%B9%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B6-%D5%A1%D5%BD%D5%A5%D5%AC-%D5%A7%D5%9D-%D5%B0%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D5%AC%D5%AB-%D5%BA%D5%A1%D6%80%D5%B8%D5%B6-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0-%D5%B0%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D5%AC%D5%AB-%D5%BA%D5%A1%D6%80%D5%B8%D5%B6-%D5%8D%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%C2%BB/368834>

կողմից շրջանառության մեջ դրված փաստաթղթից հետո»⁵: Իր հերթին, «Ինչ է կատարվում բանակցային գործընթացում» վերնագրով հոդվածում [մտահոգություն էր հայտնել](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw) 168.am կայքը:

Ընդդիմադիր շրջանակներում աստիճանաբար առաջ քաշվեց նաև այն թեզը, թե նոր իշխանությունները «բան չեն հասկանում բանակցություններից», խնդրին չեն տիրապետում և թեկուզ ոչ դիտավորյալ, բայց հանձնելու են Արցախը: Որպես ապացույց՝ սկսեցին շրջանառել իշխանական պատգամավոր Յովհաննես Իգիթյանի [հայտարարություն](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw) այն մասին, թե Փաշինյանը խնդիր չի տեսնում, որ Ադրբեջանի պատվիրակության կազմում լինեն նաև այսպես կոչված Ղարաբաղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչներ: Իգիթյանի խոսքերը ներկայացվեցին կոնտեքստից կտրված և մանիպուլացված՝ եզրակացնելով, որ «դիրք առ դիրք հանձնում են»:

Ամենակարող Սորոսը

Հաշվետու եռամսյակում շրջանառվող ևս մեկ երկարակյաց քարոզչական թեզ էր, այսպես կոչված, «ամենակարող Սորոսի» թեզը, այն է՝ 2018 թ. հեղափոխության ետևում իրականում կանգնած են դրսի ուժեր (պայմանական և ոչ պայմանական Սորոսը), որոնց նպատակն է «ոչ հայեցի, ապազգային արժեքներ» սերմանելով՝ «կազմաքանդել Հայաստանը», վերացնել «հինավուրց հայ ազգի ինքնությունը»: Ընդ որում, Սորոսի ամենագործառնողը ընդդիմադիր և քարոզչական շրջանակները տեսնում են Հայաստանում ծավալվող ցանկացած իրադարձության մեջ:

Հաշվետու ժամանակահատվածում այս թեզն ակտիվացրեց Վիտալի Բալասանյանը, որը հոկտեմբերի 8-ին Livenews.am-ի հետ [գրույցում](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw) հայտարարել էր, թե արևմտյան դավադիր ուժերը Փաշինյանի միջոցով փորձում են կործանել երկիրը: Ավելին, քաղաքականություն մտած Արցախի հերոսը պնդել էր, թե Սորոսը հիմա էլ աչք է դրել Արցախի վրա՝ այնտեղ ուղարկելով իր կողմից ֆինանսավորվող «Իրազեկ քաղաքացիների միավորմանը» և «Թրանսփարենսի ինթերնեշնլին»⁶:

Երկրին սպառնացող «սորոսյան» վտանգների մասին ավելի ուշ ահազանգեց ուժային կառույցից քաղաքականություն մտած մեկ այլ գործիչ՝ ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցյանը: Նոյեմբերի 22-ին «168 ժամի» հետ [գրույցում](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw) Վանեցյանը խորհրդավոր կերպով ասել էր, որ Սորոսի գրասենյակը սպառնում է Հայաստանի անվտանգությանը: Վանեցյանի այս հայտարարությունն ակտիվացրեց այն թեզը, որ երկրին վտանգ է սպառնում, և օր առաջ պետք է դրա դեմն առնել: Այս թեզին անդրադարձել է «Ժողովուրդ» օրաթերթը «Երկրի վտանգված անվտանգությունը» վերնագրով հոդվածում: Թերթը անգամ կապ է տեսել Վանեցյանի հայտարարության և «Ռեստարտ» նախաձեռնության կողմից նոյեմբերի 25-ին և 26-ին ԱԱԾ-ի և ոստիկանության շենքերի մոտ իրականացված [ակցիաների](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw) միջև: «Այս հայտարարությունից հետո ի՞նչ մեսիջ էր ուղարկում Սորոսի հիմնադրամը ՀՀ ԱԱԾ-ին դժգոհության այս հրապարակային ակցիայի միջոցով», - [գրել է](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw) թերթը:

«Սորոսական արժեքների» դեմ մեծ աղմուկ բարձրացավ հատկապես այն բանից հետո, երբ հոկտեմբերի 21-ին [պարզ դարձավ](https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw), որ ԿԳՄՄՆ-ն 20 մլն դրամ է հատկացնելու տրանսպենդեր ծանրամարտիկ Մելինե Դալուզյանի մասին պատմող «Մել» ֆիլմի համար: Թիրախում անմիջապես հայտնվեց «սորոսական նախարար» Արայիկ Հարությունյանը, շրջանառության

⁵ <https://www.azatutyun.am/a/30307117.html?fbclid=IwAR1pIxp5mXRX8QuMFxFgCu0BEixehAKwLYjWuiniVcGkey95oo9r0TPCBw>

⁶ Սեպտեմբերի 8-ին Արցախի ՏԻՄ ընտրություններում «Իրազեկ քաղաքացիների միավորումը» և «Թրանսփարենսի ինթերնեշնլը» ծավալել են դիտորդական առաքելություն:

մեջ դրվեց այն թեզը, թե պետական մակարդակով LQFS քարոզ է իրականացվում: Գրեթե զուգահեռաբար քննադատվեց «ապագային» մեկ այլ [որոշում](#)⁷ դպրոցներում և բուհերում հայոց լեզու, հայոց պատմություն և հայ եկեղեցու պատմությունն առարկաները վերանայելու վերաբերյալ: Արդյունքում Past.am-ը եզրակացրեց. «Այս ամենը տեղավորվում է իշխանության՝ ազգային արժեհամակարգն արժեզրկելու քաղաքականության շրջանակներում»: «Հասարակությունը հստակ տեսնում է, որ նպատակաուղղված քայլեր են արվում ազգային ինքնության, ազգային արժեքների, ավանդական արժեքների իսպառ վերացման ուղղությամբ, փոխարենը 20 մլն դրամ է հատկացվում ֆիլմ նկարահանելու համար մեկի մասին, որը սեռափոխ է եղել», - [գրել էր](#) թերթը:

Արայիկ Հարությունյանի և կառավարության դեմ քարոզչական հարձակումն ուժեղացավ հատկապես այն բանից հետո, երբ նոյեմբերի 13-ին՝ կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը [հայտարարեց](#), որ Մել Դալուզյանը գտնվում է իր անձնական պաշտպանության ներքո: Փաշինյանի այդ ելույթից հետո տարածվեցին մանիպուլյատիվ թեզեր առ այն, որ իշխանության միակ հենարանը LQFS համայնքն է, իսկ ազգի մեծամասնությունը Փաշինյանին համարում է «պղծության և այլասերության ջատագով»:

Սորոսական լինելու և Սորոսի օրակարգն առաջ տանելու մեջ մեղադրվեց անգամ իր գրեթե ողջ կյանքում դիվանագիտական գործունեությամբ զբաղված և «Սորոսի գրասենյակի»⁷ հետ երբևէ առնչություն չունեցած արտգործնախարար Չոհրաբ Մնացականյանը: Առիթը՝ դեկտեմբերին նախարարի՝ «Չաթեմ հաուս» ձևաչափով Արցախյան հարցի քննարկումն էր լրագրողների հետ, որը կազմակերպել էր «սորոսական» «Իրազեկ քաղաքացիների միավորումը»: Սոցցանցերը անմիջապես հեղեղվեցին մանիպուլյատիվ պնդումներով, թե նախարարը մասնակցել է սորոսականների փակ միջոցառմանը և գաղտնի տեղեկություն է հայտնել լրագրողներին՝ չլուսաբանելու պայմանով: Ոմանք պիտակավորեցին նախարարին՝ «Սորոսի Չորիկ», «Չոհրաբ Սորոսովիչ», մյուսներն էլ դավադրության տեսությունն առաջ քաշեցին, թե «սորոսականները փչացնում են Մնացականյանին, իրենց ձեռնտու նոր նախարար ունենալու նպատակով»: «Ի՞նչ եք կարծում, ով է մեր ԱԳ նախարար Չոհրաբ Մնացականյանի և ԱԽԶ Արմեն Գրիգորյանի «շեֆը»: Նիկոլ՞ը, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյան՞ը... Ահա և ոչ, նրանց «շեֆը» սորոսական Դանիել Իոաննիսյանն է: Դե, «շեֆաց շեֆն» էլ, բնականաբար, Սորոսը», - վերը նշված թեզերը «Արցախադավությունն էլ հո պոզով պոչով չի» վերնագրով հոդվածում [ամփոփեց](#) «Իրավունք» թերթը:

Դավադրապաշտների թիրախում հայտնված մյուս «պաշտոնավոր սորոսականը» Արմեն Մելիքբեկյանն էր, որը դեկտեմբերի 23-ին [ընտրվեց](#) ՀՖՖ նախագահ: Մամուլում և սոցցանցերում շտապեցին արձանագրել, որ Մելիքբեկյանը սորոսական է և հակապետական: Մասնավորապես, Lurer.com կայքը «Դավադրություն՝ Թովմաս Գրիգորյանի հանդեպ. ՖԱՖ-ը պատրաստվում է անցնել գործի» վերտառությամբ հոդվածում [գրել էր](#). «Մելիքբեկյանը, ըստ հավաստի աղբյուրների, Արմենիա Հ/Ը-ից 2016-ի ապրիլին հեռացվել է հակապետական նյութեր հրապարակելու համար, մասնավորապես, կոչով դիմելով հայ զինվորներին իր հողվածներից մեկում, գրել է. «Տղերք, թողե՛ք ձեր զենքերն ու հետ եկեք, դա ձեր կռիվը չէ ...»»:

⁷. «Բաց հասարակություններ հիմնադրամ. Հայաստան»